**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2019 թ. N 703-Ն

ք. Ստեփանակերտ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընտրերի մասին օրենսգրքի 59.4-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ  է.*

1. Սահմանել ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 1.2/83
«04» 09 2019 թ.
(ստորագրություն)

Հավելվա
Արցախի Հանրապետությա
կառավարության 2019 թվականի
օգոստոսի 27-ի N 703-Ն որոշմա

**Կ Ա Ր Գ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու դիմումի հետ լիազոր մարմին ներկայացվող ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման համար պահանջվող ֆինանսական երաշխիքի (այսուհետ՝ երաշխիք) բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու դիմումի հետ ներկայացվող երաշխիքը պետք է բավարարի հետևյալ չափորոշիչները՝

1) պրինցիպալը (դիմումատուն և (կամ) ընդերքօգտագործողը) պետք է ներկայացնի ֆինանսական երաշխիք, որը տրամադրվում է բանկի, այլ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից.

2) երաշխիքի գումարի չափը պետք է համապատասխանի ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափին.

3) երաշխիքով նախատեսված պարտավորությունը պետք է լինի ինքնուրույն՝ դիմումատուի և (կամ) ընդերքօգտագործողի հիմնական պարտավորությունից անկախ.

4) երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից.

5) երաշխիքն ուժի մեջ է մտնում ոչ ուշ, քան ընդերքօգտագործման իրավունքը ստանալու օրը:

3. Երաշխիքի գումարի հաշվարկը կատարվում է դիմումատուի կամ ընդերքօգտագործողի կողմից՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների կազման ժամանակ՝ դրանցում ամրագրված միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների համար կազմված նախահաշվի հիման վրա: Նախահաշվային արժեքների հաշվարկման համար պետք է հիմք հանդիսանան ընթացիկ շուկայական գները:

4. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անցկացման ընթացքում տալիս է երաշխիքին որակական գնահատական: Ներկայացվող երաշխիքին տրվող որակական գնահատականը համարվում է բավարար, եթե այն համապատասխանում է սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված չափանիշներին:

5. Երաշխիքը մերժվում է սույն կարգով սահմանված չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ